Է. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 6 ՆՈՅԵՄԲԵՐ 1904 — ԹԻՒ 667

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Բուլղարիոյ համար տարեկան 12 ֆր. վեցամսեայ 6 »

Արտասահմանի համար տարեկան 15 » վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար տարեկան 3 տլր. վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երկարատեւ ծանուցմանց համար 20 0/0 զեղչ կըլլայ։

—o—

Վառնայի համար ձեռք 10 սանթիմ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакция на вѣстникъ „Шаржумъ" Варна

Rédaction du journal „Char oum" Varna (Bulgarie)

Բուլղարիոյ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Դրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ» Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԵԼԸ ԲԱԺԱՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼ

ԿԱՐԱՊԵՏ ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ
(ԿՐՊՕ-ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ)

Սասունի վերջին շարժումների մէջ կարեւոր դեր խաղաց, մեր կարծիքով աւելի իր զարգացմամբ, պաղարիւնութեամբ եւ խաղաղ բնաւորութեամբ, եւ Վահան Մանուէլեանը, իբր պատասխանատու մարմնի անդամ եւ պատերազմական խորհրդներին ու որոշումներին մասնակցող։ Լուրջ Վահանի ներկայութիւնը այնտեղ արդէն մեզ համար մեծ գրաւական էր համոզուելու որ Սասունի շարժումը ստիպողական էր եւ ոչ արհեստական։

Ամիսներից ի վեր Վահանից տեղեկութիւն չըկար. այդ թանկագին մարդի շուրջը տարածվող շարունակ մթութիւնը արդէն մեծ վիշտ էր պատճառում եւ ստիպում Վահանին կորսված համարել։

Վերջին օրերում կռիւների վայրից մի ընկեր վերադառնալով մեզ հաղորդեց որ Վահանը սպանված է։

Պատմիչի ասելով Վահանը ընկերներին համոզում է ցրվել թէ ձեռք չընկնելու եւ թէ դաշտի ժողովրդին պաշտպանելու համար։ առաջարկելով որ զէնքը թաքցնեն։ Վահանին թաքցնում են մի քարայրի մէջ եւ մի գիւղացի պահապան դնում։

Երկու շաբաթից յետոյ Անդրանիկը մի քանի ընկերների պաշարով միասին ուղարկում է Վահանի մօտ եւ առաջարկում եթէ ուզում է կարող է վերադառնալ. եթէ ոչ՝ կրկին կարող է մի քիչ պահել։

Վահանը ընկերներին յայտնում է որ երկրորդ երեկոյին ընկերների հետ, որոնք ձորերում թաքնված են եղել ճամբայ կնկնի։ Սակայն երկրորդ օրը Թուրքերը ձորում գտնվող ընկերների հոտը առնում են եւ տղերքը ռտիպվում են կռիւ բռնվել. Վահանը անձ ու գարձից տեղեկութիւն չունենալով որոշել ժամին թաքստից դուրս է գալիս, ու Թուրքերից պատահմամբ զարկվում. Թուրքերը նրան մօրուքով տեսնելով տէրտէրի տեղ են ընդունում եւ թեւը կտրում տանում են. եթէ հասկանային թէ Վահանն է, գլուխը կը կտրէին։

Պաշտօնապէս հաստատված չէ այս դժբախտ լուրը եւ մենք մեր շատ երջանիկ կզգայինք որ երբէք չը հաստատվէր. դրա համար էլ գրութիւնը մանրամասն դրոշմով չենք կնքում եւ խուսափում ենք կենսագրական մանրամասնութիւններից, սակայն Վահանը այն տիպերից է որոնց մասին կարելի է խօսել եւ նրանց կենդանի ժամանակ իսկ, ու երանի որ Վահանը կենդանի լինէր։

Վահանը Պոլսոյ մօտ գտնուող մի գիւղացի էր, ուսուցիչ Կեդրոնական դպրոցի նախակրթարանում. Նա երիտասարդ գրագէտներից էր եւ Պոլսոյ թերթերի մէջ, Երազ ստորագրութեամբ իրական պատկերներ էր գրում եւ արդէն բաւական անուն էր հանել:

96ի բանկայի ցոյցի պատրաստութիւններին մասնակցելով, նա վտանգաւոր կերպով կասկածվեց եւ իւթիւս ուրիշների Բուլգարիա ապաստանեց. Վահանը ուսուցչութիւն արաւ Վառնայում եւ Ֆիլիպէում ու շարունակաբար աշխատակցեց «Շարժում»ին յօդուածներ, վէպեր եւ պատկերներ գրելով։

1902ին Վահանը, իբրեւ ինտելիգենտ հայի իրական պարտականութիւնները ըմբռնող մարդ, թողեց ազատ երկիրը, գրականութիւն եւ մանկավարժութիւն եւ մեկնեց դէպի երկիր աշխատելու այնտեղ. եւ հաստատվեց Սասունում։

Դանդաղաշարժ եւ կենսական լուրջ որոշումները գանդաղօրէն տուող Վահանը, արծւասիրտ եռանդուններից աւելի շուտ թըռաւ, իր դանդաղ քայլերով, այն վայրը ուր կեանքը դժոխք է ներկայացնում իսկ մարդկային գլուխը սոխի գլխի արժէք չունի։ Նա միակ երիտասարդը հանդիսացաւ հայ գրագէտների մէջ որ հայրենիքը սիրեց ոչ թէ միայն լալով ու սգալով ու սեւ թանաքի կաթիլներով, այլ իր կեանքը իրական վտանգի տակ դնելով եւ իր երակների արիւնով հայ յեղափոխութեան պատմութեանը մի փառաւոր էջ աւելցնելով։

ՎԱՐԴՕ

ԴԷՍԻՑ ԴԷՆԻՑ

Պետերբուրգից հաղորդում են որ Մուկտէնի երկաճուղին 86 հազար վիրաւոր ռուս զինուոր է փոխադրել Լիաօեանկի ճակատամարտից յետոյ, ուրեմն եթէ մի 20—30000 էլ սպանվածներ հաշւենք, այն ժամանակ ռուսաց բանակից պակսած պէտք է լինի հարիւր հազարից աւելի զինուոր, որը մի սոսկալի թիւ է։

Բացի այդ, հետզհետէ ձախորդ լուրերը Պորտ Արտուրի գրաւման մասին աւելի լուրջ կերպարանք են ընդունում եւ որչափ էլ որ ռուսներին բարեկամ մամուլը աշխատում է այդ լուրերը կամ բոլորովին անհիմն կամ թէ շատ չափազանցված հռչակել, այնուամենայնիւ խոստովանում է թէ մինչ բալթիկեան նաւատորմիղի հասնիլը Պորտ Արտուրի՝ ռուսական վերջին պատերազմի մէջ միակ փայլուն աստղի, մարելու վայրկեանները արդէն հնչած կը լինեն։

⁂

Մինչդեռ Ռուսիան պատերազմական դժբախտութիւնների պատճառով տրամադրութիւններ է ցոյց տալիս սկիզբը դնել զիջողութիւններին՝ հանդէպ երկրի ազատական ձգտումներ ունեցող տարրին, նրա դաշնակիցը, Ֆրանսան, վերջնական հարուած է տալիս երկրի միապետական եւ կղերական տրամադրութիւններ ունեցող դասակարգերին. վերջնապէս եկեղեցին պետութիւնից բաժնելով։

Ֆրանսական կառավարութեան այդ կտրուկ վճռողականութիւնը չափազանցօրէն գրգռեց միապետական երեսփոխաններին. եւ վերջիններից մին՝ Սիվթօն անունով մի պարոն՝ իրենց անկման վրէժը լուծել ուզեց կառավարութիւնից յանձին պատերազմական նախարար Անտրէի, որը անուղղակի ճանապարհներով աշխատել է ճանաչել հանրապետութեան գաղափարին չը նըւիրված զինուորականներին նըրանց պաշտօններում յառաջադիմելու առաջը առնելու համար։

Անտրէի այդ ոչ այնքան մաքուր միջոցից օգտւելով, Սիֆթօն այնպիսի ուժգին երկու ապտակներ հասցրեց Անտրէի, երեսփոխանական ժողովի նիստի միջոցին, որ յանկարծակիի եկած գեներալը պարտաւորվեց հիւանդ պառկել։

Սակայն այդ գաղանութիւնը ազատական երեսփոխաններին, որոնցից բաւական թւով արդէն սկսել էին Կոմբի նախարարութեան հակառակ գործել, կրկին ստիպեց համախմբվել հակահանրապետականների դէմ եւ պաշտպանել Կոմբի նախարարութիւնը։

⁂

Գերմանական ցեղը յայտնի է իր ազգայնութիւնը գաղանաբար արտայայտելու մէջ, բայց վերջին օրերս Աւստրիաբնակ գերմանացիները Ինսպրուկ քաղաքում իրենց ազգայնական գաղանութիւնը գիտակցական ստորճանի հասցրին իտալացի ուսանողների եւ քաղաքացիների վերաբերմամբ պատրւակ բռնելով իտալական բաժնի բացումը Ինսպրուկի համալսարանում. Քաղաքակիրթ համարված տեւտօնները մարդկային ցեղերի ամենավայրենի ներկայացուցիչների բըրտութեամբ հալածանք սկսեցին Եւրոպական քաղաք Ինսպրուկի մէջ ամեն ինչի դէմ, ինչ որ իտալական է համարվում, ու աւստրիական կառավարութիւնը չը կարողացաւ կամ չուզեց սանձահարել այդ եւրոպացի վայրենիներին. Դեռ եւրոպացիների վրայ յոյս կայ որ նրանք կարող են

մարդկային տանջանքների բուժման համար լուրջ գործի ձեռնարկել։

...

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕԳՈՒՏԸ ՄՏԱԽՈՂՆԵՐՈՒՆ

(Շար. նախորդ թիւէն)

Պ. Ավօն Լրագրութեան վրա խօսելով գրած է. — «Գրեթէ տարի չանցնիր, որ առնէկի նման անկիւն մը ամբան մէկ նիւանդ ուղեղէ լոյս աշխարհ չընկնի լրագիր մը կամ հանդէս մը, առանց իրավէ ս եւ. է զանազանութեան մեր բոլոր եգիպտահայ մամուլի ապեւտուրութ հաւատարիմ զաւանանքի հաւատամքը դարցած է թերթ հանել եւ ազգին ծառայել։ Առանց լուրջ մտաւոր պաշարի կելլեն, խմբագրութեան աթոռը կը գրաւեն, ուստի եւ եգիպտահայ լրագրութիւնը հասեր է բացօրձակապէս անբովանդակ խայտառակութեան եւ թուղթ մրոտելու անկումին։ Պէտք է յիշենք, որ այս տողերը գրող Պ. Ավօն Աղէքսանդրիայի մէջ կը հրատարակէ «Արտէմիս» ամսաթերթը, ուրեմն, իր թերթն ալ անբովանդակ խայտառակութեան եւ թուղթ մրոտելու անկումին մէջ կը գտնուի, առանց բացառութիւն կազմելու... Կը յուսա՞նք, որ մէկը իր կնոջ եւ իր հրատարակած թերթին համար այսքան աննպաստ կարծիքներ յայտնէ։ Մարդ պարզապէս յիմար մը ըլլալու է, որ նոյն իսկ կասկածի... «Ազատ Բեմի վարիչները միայն չեն կարող ըմբռնել լրագրական բարքերու այս նրբութիւնները։

Նոյն կերպով վարուած է նաեւ «Ազատ Բեմ» Երուանդ Օտեանի վարչութեան որով, ինչպէս տեսաք անոր գրածը։

Տիկին Մառի «Արտէմիս»ի 1903 թիւ 4-5ին մէջ մեր դպրոցներու վրայ խօսելով հետեւեալ զայրոյթալից տողերը կը գրէ. «—Մեզմէ շատերը բարոյականի սահմանը չափազանց նեղ կը բռնեն..., Տարամերժօրէն անբարոյական կընկուին միայն այն կիները, որոնք կապրին ամուսնական օրինաւոր յարկէն դուրս, ազատ եւ գի՛ բարեկ կապերով, կամ թեթեւ բարքերով։ Անոնք կը վտարուին ընտանեկան մաքուր յարկերէն, եւ անոնց բարեւ տալն անգամ անպատուաբեր կը համարուի պատուաւէր անձերէ. եւ սակայն կան այնպիսի անբարոյականութիւններ՝ որոնք շա՛տ աւելի ծանր եւ վընասակար ազդեցութիւն ունին դեռ չը կազմուած նկարագիրներու վրայ մանաւանդ. ատոնք չեն տեսնուիր գուցէ, չեն քննուիր, կարեւորութիւն իսկ չեն տրուիր. մինչեւ իսկ երբեմն վարժարանական յարկերէն ներս կը յաջողին սողոսկիլ այդ կարգի անբարոյականներ «դաստիարակուհի» նուիրական անունին տակ։ Վիթխարի անբարոյական չե՞ն միթէ նախանձի թոյնով վարակուած սանել, խառնակել, չարաչար բամբասել, ստոր չարժառիթներով պաշտօնակիցներ իրարու դէմ հանել, աշակերտներուն մէջ հակառակութեան ոգի արթնցնել, խոստուածքի, շարժուածքի, կեցուածքի անօրինակ լրբութիւնով գայթակղեցնել մատաղ միտքեր։ Հազար անգամ աւելի գարշելի անբարոյականութիւններ չե՞ն միթէ ջլթիկ «ըսի ըմաւներով», եւ վարնոց չարախօսութիւններով վարժարանը պղծել..., Կրնանք ուրեմն ասկէ հետեւցնել թէ՝ ի՞նչ ահռելի աղէտներ կը գործեն «դաստիարակուհի» կոչուած այդ վիժածները մեր մատաղ աղջիկ սերունդին ճակատագրին վրայ...»։

«Ազատ Բեմ»ի վարիչները եւ անոնց պէս խորհողները ինչո՞ւ համար այնժամանակ չը հարցուցին թէ ո՞վ է այդ դաստիարակուհին՛.՛.՛։

Այս խնդրոյ առթիւ նոյն «Ազատ Բեմ»ի թիւ 14ին մէջ Տրիբուն ստորագրութեամբ լոյս տեսած յօդուածին մէջ Գաբրիէլ Գալստեան վարժարանին ուսուցչուհիներէն մէկուն դէմ շատ ծանր ամբաստանութիւններ կային, սակայն յօդուածագիրը, ինչպէս կերեւայ, տակաւին ամէն բան ըսած չէ. ուշագրաւ է հետեւեալ սպառնական պարբերութիւնը. —«Իսկ եթէ թեթեւսօլիկին մէկը յօդուածիս հակառակ ընդդիմախօսութիւն մը ընելու փորձ ընել ուզէ, այն ատեն սանձարձակ գրիչով պիտի դուրս նետենք Օրիորդին այն պէսպէս գոյները որոնք մինչ այսօր մոխրոյ տակ պահուած են։»

«Ազատ Բեմ»ի վարիչները եւ անոնց պէս խորհողները ի՞նչու համար նոյն ժամանակ յօդուածագրին չը հարցուցին թէ ո՞րո՞նք են մոխրոյ տակ ծածկուած այն պէսպէս գոյները։

«Մօդովօւրդ»ի ընթերցողները, նոր արտատպումներ ընելով չեմ ուզեր ձանձրացնել. քանի որ այդ արտատպումները նոյն իսկ «Մօդովօւրդէն պիտի ընէի, հետեւաբար կը յանձնարարեմ «Մօդովօւրդ»ի այս տարուան 5-9-10-11-12 թիւերը կարդալ, որոնց մէջ ընթերցողները պիտի գտնեն նոյն վարժուհիին վրայ գրուած խել մը աննպաստ եւ մեր ըսածները հաստատող իրողութիւններ։ Թող ներուի մեզ միայն յիշատակել մի քանի յատկանշական խօսքեր եւ պարբերութիւններ.— «Ինչո՞ւ երբեք չը խորհուեցաւ որ ուսուցիչի եւ ուսուցչուհւոյ ամենէն առաջ եւ ամենէն նուիրական պաշտօնն է՝ դեռատի սերունդին նկարագիրը ազնուացնել։ Արդ, եթէ, վարժապետը կամ վարժուհին իր ս. բարքով, իր թեւալրութիւններովը, իր յարափոփոխ բնաւորութեամբ կամ անատակ է այդ պաշտօնին, անոր մանուկ յանձնել պարզապէս Դաւաճանութիւն է։ —Անշուշտ գայթակղութեանց վերջ մը պիտի տային։ —Արդ կրնա՞նք վստահ ըլլալ որ այդ զեղծումը միացած է եւ պիտի միայ առանց տխուր հետեւանքներու...» թիւ 5.

«Եւ մտածել թէ այդ խեղճը առաջինը չէ բարեխիղճ վարժուհիներէն, որոնք կամ վարժարանէն բոլորովին կը քաշուին եւ կամ օտար վարժարաններ կը դիմեն :—Վասնզի այս բոլոր պարագաներուն մէջ միայն ու միայն ուսանողութիւնն է որ կը տուժէ։ Օր. Մանիսալեան ինչ

ՁԻՆՈՒՈՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

(Նվէր Կովկասեան նորակոչներին)

—Ծօ աս ո՞ւր եկանք, հարցրեց մինը։

—Տղաք, տղաք, աղջիկներին նայեցէք. ծօ աս ի՛նչ շատ են, յանկարծ մինը մատնացոյց անելով գիւղացի լուսամուտները, որտեղից ճիշտ որ ռուս աղջիկներ նայում էին մեզ և ծաղրածութիւններ անում։

—Ծօ տե՛ս ինչ լաւերն են է՛, բացականչեց մինը։

Ենթասպան առանց երկար բարակ մտածելու ներս մտաւ, հրաւիրելով նաեւ տղաներին: Հետաքրքրութիւնից բոլորն էլ ներս լցվեցին. նոյնիսկ չկարողացայ արգիլել ընկերոջս՝ որը խօսք տուեց իսկոյն վերադառնալ։

Բաւական ժամանակ ցուրտ փողոցում միայնակ սպասելուց վերջ՝ ես էլ գնացի, դուրս բերելու սիրած ընկերոջս։ Մտայ ներս. Ներսի աղմուկը արդէն լսելի էր մինչեւ դուրսը։ 10-ի չափ աղջիկերք խօսում և ծիծաղում էին նորակոչների հետ։ Մինը ածում էր բոնալ, որի ձայնը հազիւ էր լսւում։ Ենթասպան անվայել շարժումներով պարում էր մի աղջկայ հետ. կեանքիս մէջ առաջի անգամ լինելով տեսայ վաճառուող կանանց նիստ ու կացը։

—Ծօ Մարանկոզ, էլ դուն ալ պար խաղցի:

—Զ, չ, չէ, էհկկք կ'կլոր պար խաղանք. ասաց մի անփորձ պատանի որի լեզուն թլվատ էր և որին տուել էին Մազոտ անունը՝ երեսը մեծ մասամբ մազով ծածկուած լինելու համար։ Նրա այդ խօսքերը յարուցին մեր ծիծաղը։

—Մազոտը լաւ կըսէ, եկէք ասաց Մարանկոզը:

—Ծօ ան հըլլը էչ է, խօ՞ դու ալ էչ չե՞ս. աստեղ կլոր պար չալել ի՞նչ գիտեն. հօրդ սա՞ւնն է ի՞նչ է։ Մենք ծիծաղեցինք։

Մինչ ես ստիպում էի ընկերոջս հեռանալ այդ ապականուած վայրից, տղաներից մի քանիսը հեռացան աղջիկների հետ. հեռացաւ նաեւ Մազոտը։

—Ծօ ստ ո՞ւր, Մազոտ. դուն ա՞լ..., հարցրեց ընկերս:

—Բրբիթթուն կկերթան՝ ես ալ կկերթամ։

Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ։

Ո՜րքան ցաւալի իրողութիւն. այդ պատանին բնաւորութեամբ դեռ երեխայ, ոչնչից անտեղեակ, չքաւոր, օտարութեան մէջ հէնց առաջին քայլափոխին գործ է ունենում ընկածների հետ։

Երեկոյեան վերադարձանք շոգենաւ։

Անցանք մինը միւսի յետեւից Ղըրիմու ծովեզերեայ գեղեցկադիր քաղաքները. Այվազովսկու որրան Թէոդոսիան, գեղեցիկ Եալթան, հռչակաւոր Սեւաստոպոլը։ Սրանք մինչեւ անգամ չ'կարողացան հետաքրքրութիւն զարթեցնել նորակոչների մէջ. Նրանք զբաղվեցին ռուս կենդանի ապրանքներով, ենթասպայի հետ նրանք տալիս էին այցելութիւն «թութուչիկ մաթուշկաներ»ին և վերադառնում շոգենաւ։

Ահա մօտ է Օտեսսան։

Արշալոյսը ծովի վերայ տեսնելու համար առաւօտեան զարթնեցի շատ վաղ և բարձրացայ տախտակամածի վրայ, դիտելու այնքան ինձ համար հետաքրքիր այդ գեղեցիկ ծովային տեսարանը:

Երկինքը պարզ էր. ուժգին փչում էր կատաղի հիւսիսը, բարձրացնելով բլրանման ալիքներ. շոգենաւը բաղի նման օրօրւում էր։ Իր սուր պողպատեայ կրծքով նա պատառում էր փրփրադէզ ալիքները, որոնք կրկին անգամ, անզօր զայրոյթով խփւում էին նրա անզգայ կողերին և, զգալով իրենց անզօրութիւնը, կարծես թէ յաղթահարուած, տխուր տեսքով, իրար հրելով, դիմում էին դէպի հեռուն՝ դէպի հորիզոն։ Արեւելեան կողմը սկսեց շառագունիլ, որը աւելի և աւելի լայն չափեր էր ընդունում: Ծովի մակերեւոյթի վրայ երկինքը բոցաւառվեց. գեղանի արուսեակը նսեմացաւ։ Յանկարծ ծովի տակից կամաց սողալով դուրս եկաւ հրեղէն մի մեծ գունտ. կրակէ գունտը մի քիչ բարձրանալով, իւր անդրադառնումը գտաւ հիւսիսային Պոնտոսի հայելանման կապոյտ ջրերի մէջ. նոյնանման մի գունտ երեւան եկաւ ծովի յատակ մակերեւոյթում։ Մինը վերեւից, միւսը ներքեւից նայում են իրար և կարծես ողջունում «բարի առաւօտ»: Տեսարանը գագաթնակէտին է։ Ո՜րքան հրաշալի է արշալոյսը ծովի վրայ. այնուհետեւ սկսում է նսեմանալ։

Մօտեցանք նաւահանգստին, ուր ահագին տարածութեան վրայ շոգենաւերի կայմերը կազմել էին մի խիտ անտառ։ «Նովորոսիյսկ»ը երկիւղով մօտեցաւ եզերքին և ահագին շառաչմամբ խարիսխ ձգեց։

Մենք խմբովին դուրս եկանք և դիմեցինք դէպի զօրանոց. Ճաշին մեզ հաւաքեցին և ստուգելուց յետոյ տարան զօրանոցի ճաշարան, ուր շարքով դրած էին մի քանի փայտէ մեծ սեղաններ։ Ամեն մի սեղանի շուրջը շարվեցին 10-ից մինչ 13 հոգի. քիչ անց մեզ բաժանեցին ռուսական զինւորի սեւ թթու հացր, որը հնցած լինելով, հազիւ կարողանում էինք դանակով մանրել: Ահա մեծ պղնձէ ամաններով բերին թթու կաղամբից պատրաստած հռչակաւոր «պորճը», ապուր։ Ամեն մի սեղանի վրայ դրին մի մի հատ այդ պորճով լիք ամանից, որի միջից մեր փայտեայ մեծ դգալներով մենք պէտք է վերցնէինք պորճը և խմէինք։ Ուտել չեմ ասում, որովհետեւ մէջը ուտելու ոչինչ կար, բացի կաղամբի մի քանի լողացող տերեւներից։ Թէեւ ռուսական պորճը այդ աստիճան վատ չեն եփում, բայց մեզ՝ դժբաղդներիս այդպէս վիճակվեց. երբ հին զինւորները ճաշեցին վերջացրին, մնացած «պորճ»ի վերայ աւելացրին ջուր և մի քիչ կաղամբ ու շտապով եփեցին, որպէս զի նորակոչներին եւս բաժին հասնի։ Մենք խնդրեցինք թոյլ տալ մեր միջոցով ճաշել քաղաքի մասնաւոր ճաշարաններից մինում, չ'համաձայնեցան։

Խեղճ նորակոչներ, քաղցը մի կողմից, ցարտը միւս կողմից ստիպում էին մեզ լակել այդ լափը, որը նոյնիսկ գուցէ շները չ՛լափեն։

Նոյն օր գիշերուայ ժամը 10ին գնացքով մենք պէտք է ուղեւորվէինք Կիշնեւ, մեր վերջի կայանը։ Մենք դարձեալ շալակեցինք մեր ծանր բեռները և գնացինք երկաթուղու կայարան։ Առաջի զանգը խփելու պէս՝ մենք դիմեցինք կայարանի միւս կողմը, ուր կանգնած էր շոգեկառքը՝ վագոններով։

Ծառայողները ցոյց տուին մեզ համար յատկացրած վագոնը, որը կազմում էր ամենավերջինը։ Ո՜հ, մեզ համար յատկացրած այդ սայլոն վագոնը, որը կեանքիս մէջ առաջին անգամ տեսայ, ընդմիշտ վառ է մնալու

կարողութեան եւ արժանիքի տէր ալ ըլլայ, չէք վարանիր յայտարարելու թէ իր պաշտօնավարութիւնը օգտակար ըլլալէ շատ հեռի է։» Թիւ 9։

«Հոս, Գահիրէ-լուսաւոր եւ ազատ հողին վրայ, մեր սիրասուն աղջիկները, վաղուան հայութեան յուսատիպ մենոտները, կեղծիքի ու ապօրինութեան թունալից մթնոլորտին մէջ կը պահուին։» Թիւ 10-11։

«Օր մը երբ հոգաբարձուն վարժարանէն ներս կը մանէր, կը տեսնէ թէ երկու տարբեր սեռէ պաշտօնեաներ բացակայ են. երբ տընտեսին կը հարցնէ, պատասխան կառնէ թէ մանչերուն ճաշարանին ներքին մասին մէջ իրարու հետ կը տեսակցին։ Հոգաբարձուն կը հրամայէ տնտեսին որ դուրս հանէ զանոնք(!), ու կելնեն, եւ որովհետեւ այսպիսի գաղտնի յարաբերութիւններ, որչափ որ անբարոյական հանգամանք մըն ալ չունենան(!), դարձեալ երեւոյթներն վարժարանին երկսեռ ուսանողաց բարոյականը գաղթակղեցնելէ ուրիշ բանի չի ծառայեր։ Թիւ 12։

«Մշակի մէջ մեր յօդուածը լոյս տեսնելէ առաջ եւ յետոյ գրուած այս ամբաստանութիւններուն եւ նախատինքներուն ի՞նչպէս կարողացան համբերել եւ լռելեայն համակերպիլ «Ազատ Բեմի» վարիչները եւ իրենց հման խորհողները, մանաւանդ մեր պատուախնդիր(!) ուսուցիչներէն ոմանք։։։։

Էվրեքա՜...։ Պատասխանը արդէն գրած են. այդ բոլոր գրողները մեզի պէս ծանր խօսքեր., անբարոյական եւ պոռնիկ բառեր չեն արտասաներ։։։։ Անբարոյական խօսքը իր լայն իմաստով աւելի ծանր ըլլալով հանդերձ, մեր յիշած յօդուածագիրներէն ոմանք գործածեր են, ուրեմն, այդ մասին առարկութիւն աւելորդ է. գալով «պոռնիկ» բառին, այդ մեր պեխերաւոր երախաներուն ո՞վ իրաւունք տուաւ, որ այդ բառը առնեն իր սեռական իմաստով... Թողնենք մի կողմ, որ շատ անգամ այդ մտքով ապականուածներ յաճախ աւելի քիչ վնաս կը հասցուցեն մարդկութեան, մանաւանդ մասաղ սերունդին, որքան աւելի շատ վնասներ կը հասցուցեն ոչ սեռական պոռնիկները, վարքով ու բարքով պոռնըկացածները։ Եթէ պոռնիկ բառը իր սեռական մտքով պիտի առնուէր, ապա ուրեմն, ի՞նչու համար նոյն մտքով չէ առնուած, երբոր Գալատեան վարժարանին հոգաբարձու պ. Արտաւազդ Հանըմեան, իներկայութեան Աւետիս քահանայ Շաղոյեանի, Յովհաննէս Սէթեանի, Յակոբ Մարզպանեանի, Օհան Խնտամեանի (այս պարոնը յօդուածը գրած ժամանակ միտքը չինկաւ արդեօ՞ք այս դէպքը. ի՞նչպէս չարուն նակեց պաշտօնավարել միեւնոյն յարկին տակ ամբաստանեալին հետ...), Սուրէն Էթմէքճեանի եւ ուրիշներու, Օր. Մանխալեանի երեսին պոռնի՛կ պոռաց։։։։։

Գրիչը ձեռք առնելէ, վճիռներ արձակելէ եւ պոլ-պոլ հայհոյելէ եւ ծաղրելէ (ծաղրելի դառնալէ) առաջ մեր պեխերաւոր երախաները միթէ՞ պարտաւոր չէին գիտնալ այս ամէնը.

յիշողութեանս մէջ։ Պատկերացրէք մի մեծ հին ապրանքատար վագոն, զուրկ նստարաններից. մէջտեղը կէս մեր խորութեամբ մի լայն թոնիր, որի մէջ վառուում էին փայտի մեծ մեծ կտորներ. բոցերի հետ միասին վեր էր բարձրանում սեւ ծուխը, որով ամբողջապէս լցուած էր վագոնը։ Բամին թոյլ չէր տալիս, որ ծուխը դուրս գնայ դռներից և առաստաղի լայն բացուած ծակից։

Մենք բողոքեցինք այդ անխղճութեան դէմ, սակայն ի զուր. մեզ սպառնացին. ճար չկար։ Դեռ կանգնած ժամանակ կերպով նայում էինք բարձրացող բոցերին և տարածող սեւ ծուխին, երբ խփեց երկրորդ զանգը. մի ինչ որ անյայտ ուժից դրդված, մենք յանկարծ սկսեցինք իրար հրելով ներս լցվել վագոն լաւ տեղ ձեռք բերելու։ Անզգուշութիւնից տղաներից մինի կապոցը ընկաւ թիերի մէջ և այրվեց։ Մինչ ոմանք ծաղրում էին և ոմանք ցաւակցութիւն էին յայտնում այդ դէպքի առթիւ, լսվեց վերջի սուլոցը և գընացքը շարժվեց առաջ։

Առաւօտեան ժամը 7-ին երբ արեւը նոր էր ծագել մենք՝ ցրտից դողահար կանգնեցինք Կիշնեւի խղճուկ կայարանի ոգեւ։

Ախալցխայում մեզ արդէն նշանակած էին երկու գնդերի վրայ, Վալինսկի և Մինսկի։ Սոյն գնդերի կողմից կայարան էին եկել մի մի կառք և մի քանի զինուորներ։ Նշանակուածի համեմատ մեզ զատեցին. մի մասը տարան Մինսկի գնդի զօրանոց, իսկ մենք, մնացածներս թիւով 22, դիմեցինք դէպի Վալինսկի գնդի զօրանոց։

Սկսում՝ մեզ տարան նոյն գնդի գիւանատուն։ Կէս ժամ անց՝ մեր հասակի բարձրութեան համեմատ՝ մեզ կանգնեցրին երկու շարք։ Ահա ներս մտաւ գնդի հրամանատարը, որը մի միջահասակ, խոժոռադէմ, մօտ 60 տարեկան սպիտակ մազերով ծերունի էր։ Նա խոր և զննող հայեացքով նայեց մեզ։

— Օ՛, օ՛, վնաս չունի. լաւ զինուորագուներ են ուղարկել, բացականչեց նա՝ բռնելով տղայի մը դունչից և վեր բարձրացնելով գլուխը։

Հրամանատարը մեզ բաժանեց «ոտաների, զօրախմբերի վրայ, նշանակելով բարձրահասակներին առաջի կարգի իսկ կարճահասակների ամենավերջի. 10-ից 16 երրորդ զօրախմբերում. Գունդը ունի 16 զօրախումբ, «ոտա»։ Հետեւապէս ամեն մի զօրախմբին հազիւ բաժին ընկան մի կամ երկու տղայ։ Գիւղացի մի տղայի հետ ինձ վիճակվեց ընկել չորրորդ զօրախմբում։

Այնուհետեւ մեզ տարան առաջի բաթալիոնի (*) զօրանոցի ճաշարանից մէկում տեղաւորեցրին։ Առժամանակ մենք բոլորս պէտք է ապրէինք միասին։ Ճաշարանում երկու կարգ դասաւորած էին երկաթեայ նեղ մահճակալներ, որոնց վրայ ձգած էին խոտով լցուած հին անկողիններ, ուրիշ ոչինչ չկար։ Հին զինուորներից երեքին նշանակեցին մեզ համար «դեսդկա» խնամակալ, որոնք պարտաւոր էին հոգ տանիլ մեզ վրայ, հսկել, և չ'թողնել հեռանալու։ Նոր-բակոչները անսկսցնում էին ուրախ ժամանակ. հին զինուորներից մինը առնում էր գարմոն, իսկ նրանք երգում և պարում էին։ Երեկոյեան ժամը 9-ին մեզ կանգնեցինք պօվերկի, մեզ ստուգելու. աղօթքից յետոյ պարկեցինք քնելու։

Չեմ յիշում թէ ո՞րքան ժամանակ էր անցել, դեռեւս ես քուն չէի եղած։ Անորոշ կերպով հայեացքս նետած առաստաղին, ես ընկել էի մտքերի աշխարհը. մտածում էի վիճակիս մասին։

— Վեր կացէք պնանք։ ժամանակ է հազիւ լսելի ձայնով ասաց մինը ռուսերէն լեզուով, ես երեսս դարձրի դէպ այն կողմ։

— Բոլորը քնած են, չեն կարող լսել, կռացած ասում է հին զինուորը՝ մեր դեսդկաներից մինը՝ նորակոչին, որը պառկած է ինձնից ոչ հեռու։

— Մի քիչ էլ սպասենք՝ յետոյ. ի՞նչ կայ շտապելու, պատասխանում է նորակոչը։

— Գիշերը կանցնի և՞ տեղն էլ հեռու է, վեր կացէք։

— Ծո, Մարանկոզ եկ երթանք. Մկոյին ալ ձէն տուր։

Դանդաղ կերպով նորակոչներից չորսը վեր կացան, հագնվեցան և մեր խնամակալ նշանակուած զինուորների հետ կամաց դուրս սողացին՝ անայտացան։

Ո՛րքան քաղցր է օտարութեան մէջ այն քունը, երբ մարդ երազով լինում է իւր սիրած ծննդավայրում, իրան զգալով անցեալի երջանիկ իրողութեան մէջ. նա մոռացութեան է տալիս ներկայի դառն վիճակը. հոգսերը, տառապանքները։ Նոյնը զգացի նաեւ ես. և ի՞նչպէս չ'զգայի երբ երազումս, փոխանակ զօրանոցի, ինձ գտայ պաշտելի ծննդավայրում, սիրածս էակների մօտ։ Ահա գեղատեսիլ խրոխտ Արագածը իւր սպիտակափայլ գագաթներով. ահա հեզիկ Ախուրեանը դալար ու ժայռոտ ափերով. ահա ծովածաւալ Շիրակայ դաշտը իւր պատկառելի հնութեանց աւերակներով, որոնց մէջ այնքան երկար թափառել եմ ես։ Երբ այս բերկրալի երեւոյթին՝ առաւօտեան զարթնելիս, յաջորդում է դառն իրականութիւնը, երբ երեւան է գալիս զօրանոցի դաժան կերպարանքը, երբ լսում էի ինձ վիճակակիցների հառաչները, տխրութիւնս բարձրանում էր գագաթնակէտին։

Առաւօտուն մեզ զարթնեցրին շատ վաղ և ստիպեցին վեր կենալու։ Նոր-բակոչները դժուարանում էին, իսկ դեսդկաները ստիպում կամքաշքում նրանց ոտներից։

— Շան տղաքը չեն թողնի թէ յիշ մալ քուն ըլլիս. աս ի՞նչ է, հրլը գիշեր է, ասոնց...

— Ծո, Մարանկոզ, իշու գլուխ չը կշտացար քնելուց. աս ի՞նչ զբոր գիշեր է։

— Ձէնդ կտրէ՛ դու ալ իշու մեծ, խելքդ հասաւ կ'խօսիս թէ չէ՝ սաղ գիշերը կ'խռմբոյիր, ամա մենք տնօրհնենք կը պտտէինք։

— Ծո աստեղ աղջիկը աս ինչ ուժան է, ասաց Մկոն, պառկած տեղից։

— Ծո աս ո՞ւր էիք գգնացել, հարցրեց Մազոտը։

— Ամա կծու նստեց հա՞, (*) քու էն սոխ..., հայհոյեց Մկոն։

— Ծո աս սոխը մեզի խոսաացաւ քաղաք տանիլ պատցնելու, սկսեց կարոն, ման եկանք, ման եկանք մէմա տեսնենք ի՞նչ, չիմչիտակ Պարտէլի առաջն ենք...

Ահա առաջի գիշերը կիշնեւում։

(Շարունակելի)

(*) Շատ դրամ ծախսել։

պարտաւոր չէի՞ն հարցուփորձ ընել խնդրոյն ծանոթ անձնաւորութիւնները, Դէրիսճեան պէյ, Ագիպ պէյ, Կոկունեան, Սիմոնեան, Զրաքեան, Եպիբանեան Հանրմեան Տնօրէն, ուսուցիչ, ուսուցչուհի, ծնողներ, եւ այլն։

Մեր պեխերաւոր երախաները այս ու այն կողմ կը փսփսան թէ Փաշաեանը Եգիպտոս գալէն յետոյ կուսակցական հակառակութիւնները սկսան եւ թէ պատճառը Փաշաեանի կուսակցամոլութիւնն է(!)։ Նախ որ մեր գործունէութեան քսան երկար տարիներուն մէջ գործով ցոյց տուած ենք մեր կուսակցամոլ մը չը լինելը։ Իսկ Եգիպտոսի մէջ համերաշխ ոգի մը պահելու համար ամէն ճիգ թափած եւ փորձով ալ, գործնականապէս ալ ապացուցած ենք։ Թիշենք մեր փաստերը։

1. Գիտնալով, որ Տիգրան Երկաթ Միութեան ընթերցարանը վերակազմ եալներու յատուկ գործ մըն է, մենք ամենայն սիրով եւ յարմար առիթներով սկսանք յաճախել այնտեղ։

2. Նոյն ընթերցարանին նուիրեցինք մի տալեկան «Առողջապահիկ» թերթ եւ պիտի շարունակէինք, եթէ մեր հակառակորդները իրենց կուսակցամոլութիւնը ցոյց չը տային։

3. «Կարմիր Խաչի Տիկնանց Միութիւնը» Դաշնակցականներու ձեռքով կազմուած ըլլալով հանդերձ, հակառակ մեր մէկ քանի ընկերներու առաջարկին, միայն համերաշխութեան ոգին արձարձելու նպատակաւ աշխատեցայ եւ յաջողեցայ այդ միութեան չկոչք գոյն մը տալ։

4. Աղէքսանդրիայի դաշնակցական խումբերուն համար անհրաժեշտ եղող խմբաւորին բանալով, անհամերաշխութեան տեղի չը տալու եւ «Տիգրան Երկաթ Միութեան» ընթերցատան գործը չը խանգարելու համար, այդ խմբաւորին ընթերցարան չը կոչեցինք եւ այդ մասով ալ կոմիտէի կողմէ հերքում մը տպեցինք «Ժողովուրդ»ի մէջ եւ խմբաւորին ճակատին վրայ միայն խմբաւորի խօսքը արձանագրել տուինք։

5. Գիտնալով հանդերձ, որ «Ազատ Բեմ» վերակազմեալներու օրկան մըն է եւ ոսկայն յուսալով որ թերթը չը պիտի ծառայեցնեն կուսակցական նեղ մտածումներու, բաժանորդ գրուեցայ։

6 Իմ անձնական յարաբերութիւններս բոլորի հետ ալ (բացի ամիրայական հովեր ունեցողներէ) անկեղծ բարեկամական եւ համերաշխ էին։

Ուրեմն, ո՞վ քանդեց այս համերաշխութիւնը։ Ես թէ հակառակորդներս։

Առաջին քարը նետողը «Ազատ Բեմի» խմբագրութիւնը եղաւ, անձնական վիրաւորանք հասցուց Տիկնոջ ծաղրական չեշտով մը Խանումի կոչելով, կուսակցամոլութեամբ կուսակցական վիրաւորանք հասցուց Սասնոյ տաք կռիւներուն ժամանակ թրքական ապրիլներէ եկած յուսահատեցնող հեռագիրներուն միայն «Ազատ Բեմ»ի մէջ տեղ տալով. իսկ հայերուն (իրենք դաշնակցականներուն կը հասկնան) նպաստաւոր եւ ոգեւորող լուրերը բնաւ տեղ չէին

կանգնեցրին երկու շարք։ Ահա ներս մտաւ գնդի հրամանատարը, որը մի միջահասակ, խոժոռադէմ, մօտ 60 տարեկան սպիտակ մազերով ծերունի էր։ Նա խոր և զննող հայեացքով նայեց մեզ։

— Օ՛, օ՛, վնաս չունի. լաւ զինուորագուներ են ուղարկել, բացականչեց նա՝ բռնելով տղայի մը դունչից և վեր բարձրացնելով գլուխը։

Հրամանատարը մեզ բաժանեց «ոտաների, զօրախմբերի վրայ, նշանակելով բարձրահասակներին առաջի կարգի իսկ կարճահասակների ամենավերջի. 10-ից 16 երրորդ զօրախմբերում. Գունդը ունի 16 զօրախումբ, «ոտա»։ Հետեւապէս ամեն մի զօրախմբին հազիւ բաժին ընկան մի կամ երկու տղայ։ Գիւղացի մի տղայի հետ ինձ վիճակվեց ընկել չորրորդ զօրախմբում։

Այնուհետեւ մեզ տարան առաջի բաթալիոնի (*) զօրանոցի ճաշարանից մէկում տեղաւորեցրին։ Առժամանակ մենք բոլորս պէտք է ապրէինք միասին։ Ճաշարանում երկու կարգ դասաւորած էին երկաթեայ նեղ մահճակալներ, որոնց վրայ ձգած էին խոտով լցուած հին անկողիններ, ուրիշ ոչինչ չկար։ Հին զինուորներից երեքին նշանակեցին մեզ համար «դեսդկա» խնամակալ, որոնք պարտաւոր էին հոգ տանիլ մեզ վրայ, հսկել, և չ'թողնել հեռանալու։ Նորակոչները անսկսցնում էին ուրախ ժամանակ. հին զինուորներից մինը առնում էր գարմոն, իսկ նրանք երգում և պարում էին։ Երեկոյեան ժամը 9-ին մեզ կանգնեցինք պօվերկի, մեզ ստուգելու. աղօթքից յետոյ պարկեցինք քնելու։

Չեմ յիշում թէ ո՞րքան ժամանակ էր անցել, դեռեւս ես քուն չէի եղած։ Անորոշ կերպով հայեացքս նետած առաստաղին, ես ընկել էի մտքերի աշխարհը. մտածում էի վիճակիս մասին։

— Վեր կացէք պնանք։ ժամանակ է հազիւ լսելի ձայնով ասաց մինը ռուսերէն լեզուով, ես երեսս դարձրի դէպ այն կողմ։

— Բոլորը քնած են, չեն կարող լսել, կռացած ասում է հին զինուորը՝ մեր դեսդկաներից մինը՝ նորակոչին, որը պառկած է ինձնից ոչ հեռու։

— Մի քիչ էլ սպասենք՝ յետոյ. ի՞նչ կայ շտապելու, պատասխանում է նորակոչը։

— Գիշերը կանցնի և՞ տեղն էլ հեռու է, վեր կացէք։

— Ծո, Մարանկոզ եկ երթանք. Մկոյին ալ ձէն տուր։

Դանդաղ կերպով նորակոչներից չորսը վեր կացան, հագնվեցան և մեր խնամակալ նշանակուած զինուորների հետ կամաց դուրս սողացին՝ անայտացան։

Ո՛րքան քաղցր է օտարութեան մէջ այն քունը, երբ մարդ երազով լինում է իւր սիրած ծննդավայրում, իրան զգալով անցեալի երջանիկ իրողութեան մէջ. նա մոռացութեան է տալիս ներկայի դառն վիճակը. հոգսերը, տառապանքները։ Նոյնը զգացի նաեւ ես. և ի՞նչպէս չ'զգայի երբ երազումս, փոխանակ զօրանոցի, ինձ գտայ պաշտելի ծննդավայրում, սիրածս էակների մօտ։ Ահա գեղատեսիլ խրոխտ Արագածը իւր սպիտակափայլ գագաթներով. ահա հեզիկ Ախուրեանը դալար ու ժայռոտ ափերով. ահա ծովածաւալ Շիրակայ դաշտը իւր պատկառելի հնութեանց աւերակներով, որոնց մէջ այնքան երկար թափառել եմ ես։ Երբ այս բերկրալի երեւոյթին՝ առաւօտեան զարթնելիս, յաջորդում է դառն իրականութիւնը, երբ երեւան է գալիս զօրանոցի դաժան կերպարանքը, երբ լսում էի ինձ վիճակակիցների հառաչները, տխրութիւնս բարձրանում էր գագաթնակէտին։

Առաւօտուն մեզ զարթնեցրին շատ վաղ և ստիպեցին վեր կենալու։ Նորակոչները դժուարանում էին, իսկ դեսդկաները ստիպում կամքաշքում նրանց ոտներից։

— Շան տղաքը չեն թողնի թէ յիշ մալ քուն ըլլիս. աս ի՞նչ է, հրլը գիշեր է, ասոնց...

— Ծո, Մարանկոզ, իշու գլուխ չը կշտացար քնելուց. աս ի՞նչ զբոր գիշեր է։

— Ձէնդ կտրէ՛ դու ալ իշու մեծ, խելքդ հասաւ կ'խօսիս թէ չէ՝ սաղ գիշերը կ'խռմբոյիր, ամա մենք տնօրհնենք կը պտտէինք։

— Ծո աստեղ աղջիկը աս ինչ ուժան է, ասաց Մկոն, պառկած տեղից։

— Ծո աս ո՞ւր էիք գգնացել, հարցրեց Մազոտը։

— Ամա կծու նստեց հա՞, (*) քու էն սոխ..., հայհոյեց Մկոն։

— Ծո աս սոխը մեզի խոսաացաւ քաղաք տանիլ պատցնելու, սկսեց կարոն, ման եկանք, ման եկանք մէմա տեսնենք ի՞նչ, չիմչիտակ Պարտէլի առաջն ենք...

Ահա առաջի գիշերը կիշնեւում։

(Շարունակելի)

(*) Շատ դրամ ծախսել։

գտնար այդ թերթին մէջ։ Իսկ երկրորդ քարը նետողը դարձեալ «Ազատ Բեմ»ի խմբագրութիւնը եղաւ «Մշակ»ի մէջ գրուած յօդուածս պատրուակելով եւ այս անգամ բոլորովին իր գոյնը եւ սեւ հոգին ցոյց տալով, ասոր վկայ են «Ազատ Բեմ»ի մէջ իմ անձիս (եւ ոչ թէ խնդրոյն) դէմ գրուած յօդուածները եւ արտադրողին ոգին պատկերացնող ոտանաւորները։

Այս ամէնը միայն մէկ բան ապացուցին, թէ «Ազատ Բեմ»ի գրչակները եւ իրենց սրտովին համախոհները պարզապէս պեխերաւոր երախաներ են, որոնց հետ գործել եւ որոնց վրայ յոյս դնել կարելի չէ։

Մենք մեր վերջին խօսքը ըսինք. այժմ Եգիպտոսի հայ գաղութին կը մնայ մտածել իր զաւակներու կրթութեան գործը մասաւորական եւ բարոյական ամուր հիմերու վրայ դնելու միջոցները որոնել եւ իր ազգային հաստատութիւնները նպատակայարմար եւ օրինաւոր կերպով ղեկավարելու արդար իրաւունքին տիրանալ։

Մենք հ հարիւին ժողովուրդի ցաւերուն արձագանք տալու միջոցներ կըստեղծենք։ Երբոր մենք կըսեմ։ ես ինքզինքս հասկցնել չեմ ուզեր. այլ ինձ նման խորհողներու եւ ժողովուրդի ցաւերուն իսկապէս ցաւակիցներու միացած ոյժը ակնարկել կուզեմ, որը այսօր արհամարելի ոյժ չէ եւ կարող է իր ճամբուն վրայ շարուած մեծ ու փոքր խոչնդոտները ջնջել տանիլ եւ հայ ժողովուրդը առաջնորդել դէպի փրկութիւն։

Տօք. Կ. Փաշայեան

18 հոկտ. 1904

Ալեքսանդրիա

ՏԱՊԱՆԱՔԱՐ

—)o(—

Իրա՛ւ են եղեր մարդիկ, որ «մեռնելէն աւելի տխուր է նպատակին չհասած մեռնիլ». փորձը իմ վրաս կը տեսնամ։ Ուրախութիւնս անսահման է, որովհետեւ նախատեսածներս իրականացան եւ ես նպատակիս հասայ։

Նուազի-լը-Սէքի կղերական դարբնոցը իր ճիզվիթական գործառնութեան եղանակովը եւ բիւրիցս խարդախ Քոլոննա կինը անկէ երկու տարի առաջ «Շարժումի» ընթերցողներուն ծանօթացուցած էի, գտնուեցան մարդիկ ու թերթեր որ իբր չարախօսութիւն ստացան մեր բոլորովին անկեղծ յայտնութիւնները, անոնց համար կը գրեմք այս «տապանաքարը»։

Նուազի-լը-Սէքի երբեմնի խորհրդաւոր տան դռան վրայ խոշոր գրերով գրուած էր՝ «Հայկական սրբանոցներու գործը»։ Մեր գրչի քանի մը հարուածներուն տակ վա՛ր ինկաւ այդ տան առեւտրական ֆիրման. սպասեցէ՛ք, անոր տեղը գրուած է հիմա «Արուեստական վարժարան» անունը, որուն տակ կապրին այսօր Ռումանիայէն և Պուլղարիայէն ճանկուած մի քանի տղաքը։ Ինչպէս երբեմն որբանոց չէր, այնպէս ալ այսօր վարժարան չէ՛. առեւտրական տուն մը՝ տպարան մ'է, Փարիզեան գրավաճառի մը սեփականութիւնը։ Կե՛ղծ, ու շահագործող կին Քոլոնան այդ տան վրայ այլեւս ոչ մի իրաւունքն չունի և հայ տղայքը 3 մէթր գետնափորի մը մէջ գրաշարութեամբ կը զբաղին՝ շաբաթը 20 սանթիմով, (մէկ դրուշով) և աստիճանաբար թունաւորուելով։

Այս հերիք չէ. անցեալ ամսուն այրի Աքտէրեանի երկու աղջիկ զաւակները պաշտօնապէս ու մեծ հանդէսով «կոմունիկա» մկըրտած են։

Քէմախցի պատանի մը կմախք դարձած է։

Կաթոլիկութիւն ընդունել չուզողները կը զրկուին, կը պատժուին և կը բանտարկուին ճիշդ այն գետնափոր նկուղին մէջ որը երկու տարի առաջ նկարագրեցինք «Շարժումի» ընթերցողներուն։

Ենթադրենք թէ Արամ Աքթէրեան անզգայ, անկարող, և գաւառ զգացմունքներով խեղճութիւն մ'է, ու իր եղբորորդիները պահելու, պահպանելու պարտականութիւնը չզգացող ու չը հասկցող մը, ի՞նչ անուն պէտք է տալ ամենայն հայոց վեհափառ հայրապետի ընդհ. Եւրոպայի հայոց առաջնորդ Իւթիւճեան եպիսկոպոսին և Փարիզի հայոց հոգեւոր հովիւ Վռամշապուհ Քիպարեանին որոնք ծանօթ էին Քոլոննայի շահագործական ձեռնարկին և Նուազի-լը-Սէքի տունը իրենց խոշոր քթին առջեւ կը գտնուի։

Մեր հին ժպտակեր և կաշառակեր հակառակորդները «մեղա» ըսելով, «սխալեցա՛նք» ըսելով մեր ձեռքէն չեն կրնար ազատիլ, որովհետեւ ապագայ խոստումներով իրենց սիրտն ու հոգին ծախեցին (եթէ ունէին) ազատ քաջի մը։

Դեռ «հերիք չէ՛».

Բարիզ Սիպէ

3. Գ.— Չէ՛, չէ՛, չի պիտի թողում, որ հայորբը շահագործուի։

Նոյն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պելկրատի «Բալիթիկա» թերթը կը հաղորդէ որ Մակեդոնիոյ մէջ մօտերս մակեդոնացի յեղափոխականները ընդհանուր ժողով մը պիտի ունենան։

Այդ ժողովին պիտի մասնակցին Սոֆիայի, Պելկրատի և Ցետինէի մէջ գտնուող յեղափոխականները։

— Սխթամարա վանքին վանահայրի օգնական վարդապետը սպանուած է հայ յեղափոխականներու կողմէ, որովհետեւ Անդրանիկի խմբին գալը իմացուցած է եղեր Թուրք կառավարութեան։

ՌՈՒՍԻԱ

Զիմնթվօներուն ներկայացուցիչներուն ժողովի լուրը հետզհետէ կը հաստատուի։

Կըսեն որ Ցարը որոշած է Լորիս Մելիքովի ծրագրին մօտ սահմանադրութիւն տալ Ռուսիոյ։

— Եւրոպական թերթերու ուղղուած հեռագիրներ կը տեղեկագրեն թէ հայ եկեղեցական կալուածներու վերադարձումը լուրջ խորհրդածութեան առարկայ է և կը յուսացուի որ դրական վերջ պիտի ունենայ։

ՖՐԱՆՍԱ

Պատերազմական նախարար զօրավար Անտրէ իր հրաժարականը մատուցեր է նամակով մը. որուն մէջ կըսէ թէ ինք չի ուզեր հանրապետական մեծամասնութեան բաժանմանը պատճառ դառնալ և կը փափագի որ մեծամասնութիւնը իր գործը վերջացնէ։

Ելեւմտից յանձնախմբի տեղեկատու Բօրտ, արմատական սոսիալիստ, նշանակուեր է պատերազմական նախարար։ Այդ յանդուգն արմատական սոսիալիստին պաշտօն ստանձնելը աւելի կը զօրեղացնէ Կոմբին դահլիճը։

ՌՈՒՍՕ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Լոնտոնի մէջ Ճաբ. նոր փոխառութեան ստորագրութիւնը բացուած է. կը կարծուի որ ստորագրուած գումարը 8—9 անգամէն աւելի պիտի ըլլայ փոխառութեան գումարէն։

—Ճաբոնացիք կըսեն որ Բորթ Արթուրը կրնայ դիմանալ մինչեւ յունվար։

Գլխաւոր հրամանատար Օյամա Բորթ Արթուրէն իրեն օգնութեան եկած զօրքը ետ վերադարձուցեր է. որովհետեւ ուղղակի Ճաբոնիայէն զօրք եկեր է։

—Լոնտոն կը հեռագրեն թէ նոյեմբեր 2ին Թոքիոյի մէջ Միկատոյի նախագահութեամբ խորհուրդ մը տեղի ունեցեր է որոշելու համար թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնել բալթիկեան նաւատորմիղը անվտանգ դարձնելու համար։

—Նոյեմբեր 3ին Լոնտոն կը հեռագրեն որ ճաբոնացիները Բորթ արթուրի երեք ամրութիւններ ևս գրաւելով մօտեցեր են կեդրոնական ամրութեան, սակայն այդ տեղ 1500 հոգի զոհ տուեր են։ Ճաբոնական զօրքերը գետնափոր անցքերով կը յառաջանան։

ՆՈՐ ՍՏՍՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

—)o(—

Շնորհակալութեամբ ստացանք Վենետիկի Մխ. հայրերի «Գեղունի»ի 10րդ թիւը։

«Գեղունի»ն այս անգամ աւելի շքեղ է, նրա մէջ գտնվում են Ահարոնեանի և մի քանի ուրիշ ռուսահայ գրագէտների պատկերները և այլ ուրիշ պատկերներ և տեսարաններ։

Հ. Երամեան մի խմբագրականով ձաղկում է հայ ժողովրդի անտարբերութիւնը դէպի մի այդպիսի գեղարուեստական հրատարակութիւն, մանաւանդ որ արդիւնքը որբերի համար է, ինչպէս նաեւ հայ գրագէտներին. որոնք չեն բարեհաճել գոնէ մի մի յօդուած ուղարկել «Գեղունի»ին աւելի ճոխ բովանդակութիւն մը տալու համար։

Վերջին «Գեղունի»ի մէջ աչքի է ընկնում Լէօի մի յօդուածը, որով պարոնը որոշում է Ահարոնեանի տաղանդը, նրա գրուածների նշանակութիւնը և էութիւնը։ Յօդուածը բաւական անկողմնակալ կերպով է գրուած։

Լէօն Ահարոնեանին լալկան գրագէտների շարքում է դասում, և յայտնում է թէ Ահարոնեան մեր ցեղի լացի մարմնացումն է և մեծ լացի ժամանակի գրագէտը...

—Ռուսչուքից ընդունեցինք Ահրիմանի թարգմանած երեք փոքրիկ և աժան բրոշուրներ— «Գարնանային Մեղեդիներ», Գօրկիյ—«Զւարճութեան Ցօներ» և «Ցօներ Կուի», Կաուցկի. «Կեանքի դիմաց» Գօրկիյ։ Այս երեք գրքոյկները կարդացվելու արժանի նիւթեր են պարունակում և շատ աժան են. 10 սանթիմ ամէն մէկը, խորհուրդ կը տանք բոլորին գնել և կարդալ։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Երկուշաբթի օրը, նոյեմբերի մէկի գիշերը և առաւօտը Վառնայ ինչպէս և ամբողջ Պուլկարիա սարսափելի ձիւնային փոթորիկ տեղի ունեցաւ։ Վառաններ անկարելի եղաւ վառել, բոլոր խանութները գոցվեցին, քաղաքի մէջ յարաբերութիւնները գրեթէ բոլորովին դադրեցին, և Վարնայի հայ թերթերը անկարելի եղաւ լոյս հաններ, ի թիւս որոց և «Շարժումը»։

—

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна